

տում «անսպասելի» աւարտուող գուտ խօսքային ճայնարկութիւնները: Այսօրինակ «սկիզբն» ու «աւարտը» պարբերաբար կրկնուող փուլի առանձին մասերն են, քանի որ գրի առնողն «անվերջութիւնից» սոսկ մի հատուած է փաստագրում: Այնպէս, ինչպես նկարիչն է ընտրում բնութեան մի հատուածը՝ տեղափոխելով կտաւի վրայ իբրեւ բնանկար: Այսու, գրանցուած հոռովելների «աշխատանքային երգ» անուանումը պայմանական է, քանզի այն վարի արարողակարգի մի մասնիկն է՝ մասնագէտի կողմից առանձնացուած ու ժանրային շրջանակում գետեղուած:

Հոռովելի ծիսաառասպելաբանական սիւժէներից կը դիտարկենք միայն մէկը՝ Հողի արգասաւորմանն ուղղուած արարողակարգը: Տեքստի մանրամասն քննութեանը եւ Հոռովելի նկարագրութեանը չենք անդրադառնալ, քանի որ դրանք հրաշալի ներկայացուած են ե՛լ Կոմիտասի, ե՛լ Վ. Բոլոյեանի յիշեալ աշխատանքներում: Կը փորձենք դիտարկել միայն որոշ մանրամասներ, որոնք տարբեր պատճառներով առանձին ուշադրութեան չեն արժանացել: Հրատարակուած բանաստեղծական տեքստերը դիտարկելիս նկատելի են տարբեր հատուածներում հանդիպող կախման կէտերը: Ուշագրաւ է նաեւ, որ յաճախ դրանց նախորդող ու յաջորդող խօսքերը միմեանց հետ չեն կապուած: Քիչ չեն նաեւ աշխատանքային գործընթացի հետ ուղղակի առնչութիւն չունեցող՝ սեռական վարքագիծ ակնարկող բաներ կամ արտայայտութիւններ, կնոջ մարմնի առանձին մասերի նկարագրութիւններ, երբեմն նաեւ՝ հայհոյական խօսքեր: Քննութիւնը ցոյց է տալիս, որ յաճախ կցկտուր կամ յատուկենտ պահպանուած այսօրինակ բաներն ու արտայայտութիւնները պատահականութիւն

չեն, քանզի որոշակի նպատակաուղղուածութիւն, հասցէատէր, գործողութեան վարք, կատարման վայր ու ժամանակ ունեն: Այսպէս, ամենատարածուածը երիտասարդ կնոջը գրկելու, համբուրելու, նրան մօտակայ բլուրները կամ ակօսները տանելու, ակօսներում հետը պառկելու, «միտքը ծռելու», «ճիժ վաստկելու» մոտիկներն են, որոնք ակնառու են ե՛լ ուղղակի տողերից ե՛լ կարգացում են՝ թատեքստում:

- *
- Գութան թալէ ծաղկում բիար,
- Գոհան էգաւ մանկըլի յար.
- Մանջկալ քու մանը թող՝
- Կընա քու պագն առ⁷:
- *
- Գութա՛ն, գութա՛ն աստուածաբան,
- Առիճք իջանք հըտ գետափան,
- Խումկ ու խեցիկ պառվըներում,
- Բախ ու փետատ հալվորներում,
- Կանաչ վարոց հոտըղներում:
- Ագուաւ ցատեր վըր քարերում,
- Քարոգ կիտա աղջկներում,
- Եկե՛ք, առե՛ք հոտըղներում:
- Առիճ, իջան մըչ բըլերում,
- Ղընու իտան մանկըլներում:
- Գութա՛ն, գութա՛ն, աստուածաբան,
- Ջարկի լորում, բարձա ջորում,
- Տարա, առա խումկ արպըշում,
- Խումկ՝ պառվըներում,
- Արպըշում՝ աղջըկներում.
- Աղջի՛կ, աղջի՛կ, ջան աղջի՛կ,
- Պագ մի իտա՞ս հոտըղներում:
- Մեր գութան կծու-կծու,
- Իրիցու տում ինձի ցուցու՛,
- Ջար շեկ գըմեշ պարկըցու,

Բոնա՛ պոչեմ կանգըցու,
 Ջարկա, հանա հոտըցու,
 Անում դընա հորեվորիմ:
 Հորեվոր, հորվիս գետիմ,
 Փոշետու՛ն, փոշիմ գլխիմ,
 Խարզընտու՛ն, խնձոր գոտիմ,
 Ազապ աղջիկ ուժտընվորիմ,
 Մոտըլտու՛ն, մուկն ի բերան,
 Հաց ու պանիր ամուլվորիմ,
 Խերն ու բարիմ մեր մանկըլիմ⁸:

*

Հարս եմ ու հարս,
 Կարմիր ու ճերմակ հարս.
 Առնեմ, պառկեմ ակոսիդ,
 Եդ ե թագա հաւաւը⁹:

*

Կութան ինկեր արտի խոզան,
 Առնեմ սիրողս, էլնեմ զօզանգ¹⁰

Դաշտային հարցումների եւ հրատարակուած ազգաբանական նիւթի համադրմամբ հոռովելներում բացայայտուած է մաճկալի եւ հողագործներին հաց բերող իգական սեռի ներկայացուցիչների միջեւ ընթացող ծիսական երկխօսութիւն, որը կանոնակարգուած է խօսքային, վարքագծային ու նշանային մակարդակներում եւ պտղաբերութեանը նպատակաուղղուած սեռական-հմայական գործողութիւնների խօսքային փոխակերպումն է:

Ակնարկներ կան նաեւ գութանավարի մասնակիցներին «հաց բերող» եւ «հացը ուշացնող» կանանց հայհոյելու (հըվհովել, քըրուել, ուշունց տալ) վերաբերեալ, ինչպէս եւ շեշտեր, որոնք փաստում են, թէ «Քեֆ սիրող սեւ հարսները քանի քըրվես՝ հազ կենենք»: Նկատենք, որ այսօրինակ արտայայտութիւններից հետո կրկնուած են՝ Ջօրանա՛ս, հոտաղ, զօրանա՛ս...», «Քեֆ էրո, հոտաղ,

հո՛...», արա հո՛, հո՛, հո՛...» տողերը:
 Օրինակ.
 Մանը մանիմ է, ձեռն ակնջիմ է.
 Վա՛յ ուշտան հոտաղ, ...
 խան բաջիմ է¹¹:
 *

Մանկալ տեսաւ խաց պիրողիմ,
 Կանչեց իր խօրիկվարիմ,
 Ձեռք պոնեմ, տամ գրողիմ,
 Կերթամ խասմիմ իմ սիրողիմ:

Կարեւոր եւ առաջին հայեացքից անհաւանական է, որ Հոռովելի ընթացքում կնոջ ու տղամարդու միջեւ մտերմիկ յարաբերութիւնների ակնարկները կամ ուղղակի նկարագրութիւններն ուղղուած են ոչ թէ ընդհանուր առմամբ իգական սեռի հասցէին կամ որեւէ անորոշ ներկայացուցչի, այլ վարին մասնակցող տղամարդկանց հետ արհեստական-խնամիական կապեր ունեցող կոնկրետ կանանց ու աղջիկներին: Դրանք առաւելապէս ներառում են մաճկալի կնոջ, ներկայ տղամարդկանցից որեւէ մէկի քենու, բաշու, խանբաշու, եարի, նախշուն հարսի, կարմրաթուշ աղջկայ կերպարները:

*

Մանկալի սիրած հարսը,
 Համկալի խամբաջիմ ա՛¹²:
 *

«Մանկալը մանիմ,
 Դիում ընկանիմ,
 Ծիտ անեմ /գրկեմ/ մանկալի բաջիմ,
 Հորիքը պտտեմ
 Մանկալի բաջիմ խտըտեմ¹³:

Որոշակիօրէն ընդգծուած է նաեւ, որ հարսը՝ մաճկալի «խարջն» է, աղջիկը՝ հօտաղի կամ հորիկուորի, այսու տարբերակում են ամուսնացած եւ չամուսնա-

վելի բանաստեղծական տեքստի հերթական տան, որը տարանջատում է ընդհանուր իմաստից ու դուրս է պրծնում կառուցից, ապա նմանատիպ արտայայտութիւնների մի այլ խումբ տեսնում ենք՝ կրկնակների փոխակերպում: Դրանք հասցեագրուած են հոռովելին չձայնակցողներին, հոռովել չկանչողներին:

Այսպէս՝ էջ մի էկաւ Խլաթա,
Բշկուլ օտնն կը կաթա,
Որն չբոռա, չքաշա՝
Էնիճ Էնոր հալուայ, գաթա,
Քառուսն տարով, ախ՛քաշա... (էջ 87):

*

Չը քաշողին, չը կանչողին,
Մառալբանին, կէս գութանին,
Գործ հե՛, լե՛, լե՛, գործ, հե՛, լե՛, լե՛... (էջ 44):

*

Վոր չը քաշա, վո՛ր չը բոռա,
Որ մամ էղնի քրոյու դրոս...
Գործ առաւ, յե՛լ... (էջ 89):

*

Էնդին լուծ, էսդին լուծ,
Վոր չը բոռա, մըտնի ...
Գործ առա՛վ, յե՛լ... (էջ 89):

*

Գութանը քաշեց խամին,
Կտորեց էրկըթէ սամին,
Վեւ որ հոռովել չըսէ՝
... անոր հարսն ու խընամին... (էջ 68):

Ինչպէս եւ ակներեւ է օրինակներից, կրկին խօսքային մակարդակում սեռական կապ է ակնարկում մաճկալի, իսկ ձայնարկութիւնների միջոցով նաեւ մնացեալ հողագործների ու նրանց արիւնակից, ազգական ու խնամիահարազատական տարբեր կապեր ունեցող կանանց

ու աղջիկների, յատկապէս՝ մայրերի միջեւ: Եթէ յիշենք, որ միտք>խօսք>գործ հասկացութիւններն աւանդական պատկերացումներում նոյնացում են, ապա ասել եւ անելը եւս հաւասարարեց են: Ինչպէս ռուսական հայհոյանքի արմատների ուսումնասիրութեանը նուիրուած աշխատանքում նշում է Ուսպենսկին՝ հայհոյանքն ունի առասպելաբանական ծագում եւ բնոյթով ծիսական է: Այն նախաքրիստոնէական՝ հեթանոսական երեւոյթ է եւ տարբեր ժամանակաշրջաններում տարբեր իմաստաւորումներ է ստացել՝ իր մէջ ներառելով այլեւայլ առասպելաբանական կողաւորումներ, սակայն, բոլորի հիմքում էլ ընկած է Հողի եւ Երկնքի սրբազան ամուսնութիւնը, որի արդիւնքում ծնունդ է առնում կեանքը՝ պտղաբերութիւնը: Ուստի, հայհոյողը դիտում է իբրեւ Երկնային Աստուած կամ Ամպրոպածին, իսկ օբյեկտը՝ Մայր հողը, որը փոխակերպում է յաճախ, դառնալով Աստուածամայր կամ ուղղակի մայր: Սա է պատճառը, որ հայհոյանքը ծիսական բնոյթ ունի եւ պարտադիր տեղ է գրաւել պտղաբերութիւն ու ծնունդ ակնկալող բոլոր ծէսերում՝ հարսանեկան, Նոր Տարուայ, երկրագործական եւ այլն: Երկրագործական ծիսակարգում հայհոյողը կերպաւորում է իբրեւ Աստուածային վարող, Աստուածային ցանող հերոս եւ զուգաւորում հողի հետ: Սրանով էլ յաճախ բացատրում են ծիսական հայհոյանքի միւս գործառնոյթները՝ ընկալուելով իբրեւ չարխափան ուժ, աղօթք, համայնք¹⁹:

Խօսքային մակարդակից բացի, ծիսական հայհոյանքին զուգահեռ կատարում է նաեւ գործողութիւնը: Աշխատանքի ընթացքում այն կրում է զուտ նշանային բնոյթ՝ խնձորի կամ թաշկինակի փոխանակութիւն վարին մասնակցող եւ նրանց

հողագործներից առանձնանում է նաեւ նշանային խորհրդանիշով՝ բազմաթիւ տեքստերի հաւաստամբ ակնշիւն ոսկէ գինդ է կրում: Այս համատեքստում, Հոռովելը ոչ թէ ընդունուած կարծիքի համաձայն սոսկ աշխատանքային երգ է (որի շնորհիւ ապահովում է վարի ութմիկ ընթացքն ու կանոնաւորում հողագործների՝ ու լծկանների աշխատունակութիւնն ու տրամադրութիւնը), այլեւ տիեզերաստեղծ առասպելի եւ նրա գլխաւոր ծէսի երաժշտապոէտիկ ծածկագիր:

Այսպիսով, հոռովելների հրապարակուած տեքստերի գիտական ուսումնասիրութիւնը, ինչպէս եւ երկրագործական մշակոյթի ընդհանուր համատեքստում դրանց կատարման համար պահանջուող բոլոր անհրաժեշտ պայմանների քննութիւնը հնարաւորութիւն է ընձեռում վերականգնել երկրագործական ծիսակարգի գլխաւոր ծէսը: Ակնյայտ է, որ այն արտայայտուած խրախճանքային երանգ ունի եւ միտուած է հողի արգասաբերութեանը: Յիշենք նաեւ գութանով հողը վարելու գործընթացն իբրեւ վիշապամարտ եւ տիեզերաստեղծ առասպելի իւրովի դրսեւորում փաստարկող գիտական վարկածը²⁰ եւ գլխաւոր հերոս մաճկալին՝ որպէս Ամպրոպային Աստոյ փոխակերպում: Պատահական չէ, որ աւանդութային պայմանների ապահովմամբ ընտրուած ու կանոնակարգուած վարքով հաստատագրուած նրա կերպարը սովորական

երկրագործներից առանձնանում է նաեւ նշանային խորհրդանիշով՝ բազմաթիւ տեքստերի հաւաստամբ ակնշիւն ոսկէ գինդ է կրում: Այս համատեքստում, Հոռովելը ոչ թէ ընդունուած կարծիքի համաձայն սոսկ աշխատանքային երգ է (որի շնորհիւ ապահովում է վարի ութմիկ ընթացքն ու կանոնաւորում հողագործների՝ ու լծկանների աշխատունակութիւնն ու տրամադրութիւնը), այլեւ տիեզերաստեղծ առասպելի եւ նրա գլխաւոր ծէսի երաժշտապոէտիկ ծածկագիր:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- 1 Տե՛ս Վ. Բոյնեան, Երկրագործական մշակոյթը Հայաստանում, գ. Հայ շինականի աշխատանքային երգերը, կազմեց եւ խմբագրեց Ա. Ղանալանեան, Երեւան 1937, ՀԽՍՀ պատմութեան եւ գրականութեան ինստիտուտ:
- 2 Լոռու գութաները վարդաբլուր գիւղի ռճով: Կոմիտաս, Յօդուածներ եւ ուսումնասիրութիւններ, հաւաքեց Ռ. Թերլեմեզեան, Երեւան, 1941, Պետ. հրատարակչութիւն, էջ 68-105:
- 3 Ծուտով կ'աւարտուեն Հայոց Հոռովելների համառաբ ժողովածուի ստեղծման աշխատանքները. կազմող՝ Զ. Թագակչեան, աշխատասիրութեամբ՝ Լ. Պիկիչեանի: Այն ներառում է տարբեր հրատարակչութիւններում գետնորդի ընտրանի՝ գրանցուած Հայաստանի տարբեր ընտրանի՝ գրանցուած Հայաստանի տարբեր մարզերից 1920-ական թթ. մինչեւ մեր օրերը (Ք. Քուշմարեանի, Ա. Քոչարեանի, Մ. Մուրադեանի, Լ. Աի, Ռ. Աթայեանի, Կ. Խոյաբաշեանի, Լ. Գրքաշարեանի, Զ. Թագակչեանի, Դ. Դերոյեանի, Ա. Մուրադեանի, Լ. Պիկիչեանի, Ա. Պետրոսեանի հեղինակային ֆոնդեր): Նոտային վերծանութիւնները կատարել են Զ. Թագակչեանը, Դ. Դերոյեանը, Ա. Մուրադեանը, Դ. Դանիելեանը, Ե. Դիլանեանը:
- 4 Հոռովելների երաժշտագիտական վերլուծութեան մասին տե՛ս Մ. Բրուտեան, Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործութիւն, Երեւան, 19: Զ. Թագակչեան, Հայ երկրագործի աշխատանքային երգեր, Համապետական երրորդ գիտական կոնֆերանս մոտիւսած Հայաստանի մշակոյթի եւ արուեստի պրոբլեմներին, գեկուցումների թեզեր, Երեւան, 1977թ., էջ 22-23, ուսերեւ տարբերակը՝ էջ 159-160:

լանդոյթը չի փոխանցում առանց բացառութեան բոլոր երկրագործներին, այլ լոկ նրանց, ովքեր աչքի են ընկել եզներին ուղղորդելու և հոգածելու արուեստում: Այդ երգը, որի ծագումը, հաւանաբար, սրբազան էր դիտում և որին գաղտնի ազդեցութիւն էր վերագրում, մինչ օրս համարում է կենդանիների քաջալերելու, նրանց դժգոհութիւնը հանգստացնելու և տաժանակիր աշխատանքի տեսականութիւնը մեղմելու ուժով օժտուած: Բաւական չէ եզներին լաւ առաջնորդել կարողանալը, հրաշալիորէն ճիշտ ակօս բանալով նրանց աշխատանքը թեթեւացնելով՝ հողի մէջ մխրճել կամ բարձրացնել խփիլը: Նա, ով չի կարողանում երգել եզների համար, չի կարող լաւ երկրագործ համարուել: Այդ երգը ասերգի սեռին է պատկանում և ըստ ցանկութեան ընդհատում ու շարունակում է: Եթէ դիտարկենք այն երաժշտական արուեստի մէջ ընդունուած օրէնքների տեսանկիւնից, ապա նրա ոչ ճիշտ ձեւը և ոչ ճշգրիտ հնչեղանակները դրան հաղորդելու, փոխանցելու հնարատրութիւն չեն տալիս: Այնուամենայնիւ, այդ հրաշալի երգն այնքան համահնչուն է ուղեկցուող աշխատանքի բնոյթին, եզների վարքին, գիտական վայրին, իրենց արտայայտող մարդկանց պարզութեանը, որ չէր կարող կատարել ոչ մի երգիչ, բացի այդ երկրի «բնիկ երկրագործից»: Տարուայ այն եղանակին, երբ գիղում բացի վարից այլ աշխատանք չի լինում, այդքան քաղցրահունչ և այդքան հզօր այդ երգեցողութիւնը թեւածում է, ինչպէս քամու ձայնը, որի հետ նմանութիւնը նրան իւրայատուկ հնչողութիւն է տալիս: Իւրաքանչիւր նախադասութեան աւարտին ձգուող և դողալցող վերջին հնչիւնը՝ շնչատութեան այդպիսի անհասանկական պահուածքով, պարբերաբար ընթանում է քառորդ տոնով: Այն վայրի հնչողութիւն ունի, սակայն նրա հմայքն անմեկնելի է, և երբ սովորում ես լսել այդ երգեցողութիւնը, զգում ես, որ ոչինչ ուրիշ չէր կարող հնչել այդ ժամին և այդ վայրերում, առանց խաթարելու ներդաշնակութիւնը»:

Ж. Тьерсо, *История народной песни во Франции*, Всесоюзное издательство Советский композитор, М. 1975, стр. 144:

5 «Ձայնի» կամ «ի ձայն ասելը», որ երբեմն իբրև երգ ասելու հետ շփոթում են, մի տեսակ եղանակաւոր ասելն է, որ երգելու և «թիւ ասելու» միջին տեղն է բռնում»: Տե՛ս Մ. Աբեղեան, *Երկեր*, հտ. Ա, Թուեղիք, թուելեաց երգ, Երևան 1966, էջ 161-164, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչութիւն:

6 Հայ շինականի աշխատանքային երգերը, անդ, էջ 27-28:

7 Նշ. աշխ., էջ 70, վան:

8 Նշ. աշխ., էջ 93. ըստ՝ Ա.Հ. Գիրք 5, էջ 199, Ալաշկերտ:

9 Նշ. աշխ., էջ 94:

10 Էմիլեան Ազգագրական ժողովածու, Գիրք 6, էջ 145 վան:

11 Էմիլեան Ազգագրական ժողովածու, էջ 141, Ղարս:

12 Լալայեան, *Լոռի*, Ա.Հ Գիրք 11, էջ 69-70:

13 Քաջբերունի, *Հայկական սովորութիւններ* Ա.Հ, Գիրք 9, Թիֆլիս 1902, էջ 95-96, Գուբանի երգեր: Տպարան Կ. Մարտիրոսեանցի,

14 Հայ շինականի աշխատանքային երգերը, անդ, էջ 95:

15 Անդ, էջ 63: Ստորև բերուող միւս օրինակները նոյն գրքից են:

16 Հ. Պիկիչեան, *Դաշտային ազգագրական նիւթեր*, Լոռի, 1990 (անձնական արխիւ):

17 Կոմիտաս, անդ, էջ 74:

18 Б. Н. Успенский, Мифологический аспект русской экспрессивной фразеологии, - ст.первая, - "Studia Slavica", Hungary, 29, 1983, p.61

19 Աոյն տեղում:

20 Տե՛ս Ա. Թադևոսեան,

ՀՄԱՅՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՒԱՏԱԼԻՔՆԵՐՈՒՄ

Աստղիկ Իսրայելեան

Հայ ազգագրութեան մէջ հմայական պահպանակներին երբեւէ առանձին ուսումնասիրութիւն չի նուիրուել: Նրանք բաւականաչափ չեն կարեւորուել հետազօտութեան առանձին առարկայ դառնալու համար: Պահպանակների մասին ցաք ու ցրիւ մասնակի տեղեկութիւններ են գրի առնուել՝ կապուած այս կամ այն դէպքի, առիթի, իրադարձութեան հետ: Մինչդեռ հմայական պահպանակները ժողովրդական հաւատալիքների անքակտելի և կարեւոր մասը կազմելով, ուշագրաւ տեղեկութիւններ են տալիս մարդկանց վարմունքի, վարքի, մտածելակերպի և բազմաթիւ այլ հարցերի մասին: Պատահական չէ, որ նրանք գոյութեան հսկայական ժամանակահատուած և կիրառութեան ընդարձակ ոլորտ են ընդգրկում: Պահպանակներից մի քանիսն անփոփոխ կերպով, միևնրեր, տարբեր աստիճանների փոփոխութիւններ կրելով, լայնօրէն գործածուած են նախապատմական ժամանակներից մինչև այժմ:

Սոյն աշխատութեան նպատակն է բացայայտել պահպանակների էութիւնը՝ տարանջատել տեսակները, ցոյց տալ իւրաքանչիւրի կապը այս կամ այն հաւատալիքի, պաշտամունքի հետ, նրանց կիրառման ձեւերը, տեղը, ժամանակը: Սակայն ամենագլխաւոր հարցն այն է, թէ ինչ նպատակով են սրանք ստեղծուել: Հրամայական պահպանակների գործածութեան հիմքը, ամենայն հաւանականութեամբ, դրուել է այն ժամանակ, երբ մարդիկ բարի և չար հասկացութիւնները սկսել են տարանջատել միմեանցից: Զրադաշտական առասպելաբանութեան մէջ այս երեւոյթը յստակ ձեւակերպումը ու-

նի: Տարբերակներից մէկում երկուորեակ երկու ոգի մի ժամանակ իրենց նախագոյակ ընտրութիւնն են կատարել և այն ժամանակուանից մինչև այժմ երկուսն էլ ապրում են բոլոր մտքերում, խօսքերում և գործերում: Եւ դրանք են ըստ էութեան ԲԱՐԻՆ ու ՉԱՐԸ:

Այստեղից էլ հարց է ծագում, թէ ինչպէս են պատկերացուել չար ուժերը, ինչ կերպ են ազդում մարդկանց վրայ և ինչպիսի հետեւանքներ կարող են ունենալ նրանց հասցրած վնասները:

Աչքով տալուն կամ չար աչքին հաւատալը երեւի ոչ միայն ամենահին, այլև ամենատարածուած և կենսունակ պատկերացումներից է, որ գոյատեւում է մինչև հիմա:

Հայոց լեզուի բարբառներում բազմաթիւ բառերով ու բառակապակցութիւններով են արտայայտուած չար աչքը, աչքով տալն ու տրուելը. դրանցից են՝ չարակնութիւն, նազար, նիաթ, ալմակ, աչից ըլլալ, չար աչքի գալ, չար աչքով զարնուել, աչքըռիլ, նազար դպնել, աչքիլել, ակնահարել, նազար տալ, նիաթել...

Ժողովրդական հաւատալիքներում ամէն բան ենթակայ է չար աչքի ազդեցութեանը՝ մարդիկ, ընտանի կենդանիները, շերամի որդերը, մեղուները, գործիքը, շերամի որդերը, կահկարասին, տունը, այնները, զէնքերը, կահկարասին, տունը, այնները, զէնքերը...: Այն ի զօրու է փչացնելու, դին, արտը...: Այն ի զօրու է փչացնելու, աւերելու, կործանելու, հիւանդացնելու, սպանելու...: Անգամ ինքնասպանութիւնը ժողովրդի պատկերացումներում հիւանդութեան հետեւանք է:

Թէ որքան խոր է չար աչքի գաղա-